Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 33

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Հունանյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը:

Նիստին մասնակցում էր նաև համայնքի բնակիչ Արամ Կարապետյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

6. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

7. Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. <<Յուրիկ Բարսեղյանին հողամաս նվիրելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 14.03.2017թ. N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Հողամասեր նվիրաբերելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

11. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

11- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 2 - Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց համաձայնություն տալ փոփոխություն կատարելու Աշտարակ համայնքի 2019թ. տարեկան բյուջեում:

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ բյուջեի ծախսային մասում առաջացած խնդիրները կարգավորելու նպատակով է կատարվում վերը նշված փոփոխությունը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեն: Շ. Վահանյանը նշեց, որ 2019թ. համեմատ համայնքի բյուջեի սեփական եկամուտները պլանավորվել է մոտ 20 մլն. ՀՀ դրամով ավելի, իսկ բյուջեն ամբողջական տեսքով ներկայացվել է ավագանու անդամներին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Կ. Շահազիզյանը, Ա. Սարգսյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին Շ. Վահանյանի, համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանի կողմից:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ հիմնական մասով տեղական տուրքերի դրույքաչափերը մնացել են նույնը, իսկ աղբահանության հետ կապված տեղական վճարների դրույքաչափերը համապատասխանեցվել են <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

Հարցի շուրջ ելույթներ ունեցան և հարցեր ուղղեցին Տ. Գալստյանը, Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի տարածքում գտնվող որոշ գույքերի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, ինչպես նաև քաղաքացի Ա. Կարապետյանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Շուխյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն –6 - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար տեղակալ Գևորգ Եղիազարյանը և առաջարկեց հաստատել Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Զեկուցողի կողմից նշվեց, որ կապված նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ՝ 2020 թվականի տարեկան բյուջեով նախատեսվում է աշխատավարձերի որոշակի աճ:

Ելույթով հանդես եկան և զեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը, Կ.Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Գ. Եղիազարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

12- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց հաստատել Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

Ս. Սահակյանը նշեց, որ 2019թ. համեմատ որևէ փոփոխություն կատարված չէ, միայն կապված նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ փոփոխվել են որոշ հաստիքների աշխատավարձերի չափերը:

Զեկուցողին հացեր ուղղեցին Ա. Սարգսյանը և Կ. Շահազիզյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

12- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - *<<Յուրիկ Բարսեղյանին հողամաս նվիրելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 14.03.2017թ. N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ուժը կորցրած ճանաչել <<Յուրիկ Բարսեղյանին հողամաս նվիրելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 14.03.2017թ. N 10-Ա որոշումը:

Զեկուցողը նշեց, որ խնդիրը կապված է պետական գրանցման հետ և անհրաժեշտ է հարցը կարգավորել իրավական այլ <<ուղիով>> և նշված հարցը ուղիղ կապ ունի օրակարգի հաջորդ հարցի հետ:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

12- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

* Լ Ս Ե Ց Ի Ն - 9* - *Հողամասեր նվիրաբերելու մասին*

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից 600քմ հողատարածքներ նվիրաբերել Աշտարակ համայնքի ղեկավարին դիմում ներկայացրած սոցիալապես անապահով անձանց ընտանիքներին՝ համաձայն հավելված 1-ի, ինչպես նաև, սույն որոշումից բխող հետագա ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից:

12- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

* Լ Ս Ե Ց Ի Ն - 10* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդ-վաճառով օտարելու թույլտվություն տալուն և մեկնարկային գին սահմանելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Տ. Գալստյանը, Վ. Մկրտչյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

12- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների պահանջներով, թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասերը, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը, Վ. Մկրտչյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի դեկտեմբերի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ